

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/9 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	<p>Կիսավերարկուն պետք է կարված լինի սև գույնի բամբակյա կամ կիսաբամբակյա կտորից, բամբակի բաղադրությունը՝ ոչ պակաս 50%, իսկ խտությունը՝ 210-240 գ/մ2: Կիսավերարկուի երկարությունը գոտկատեղից առնվազն 25 սմ ներքև: Կիսավերարկուն պետք է ունենա 3 վրադիր գրպան՝ կափույրով, որից երկուսը կողային հատվածում, մեկը՝ ձախ կրծքավանդակի հատվածում: Կրծքավանդակի գրպանի վերին մասում պետք է կարված լինի լրացուցիչ վրադիր կտոր՝ նախատեսված «Անուն Ազգանվան» համար: Օձիքը՝ շրջվող, թևքերը՝ երկկարանի, հետևամասը՝ վերին կտրվածքով: Ներդիրը 4 սմ հաստությամբ սինթետիկ և մետաքսյա աստառով, որոնք միմյանց հետ մզակված են շեղանկյուն /փախլավածև/ հյուսքով, իսկ թևքերի հատվածում 3սմ հաստությամբ սինթետիկ: Աստառի մակերեսային խտությունը պետք է կազմի 60-80գ/մ2, ձախ կողմում ունի ծոցագրպան: Կիսավերարկուն կոճկվում է 5 հատ կոճակով, իսկ ներսի կողմում պետք է կարված լինի պիտակ՝ ՔԿԾ գրառմամբ: Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի պահանջով համաձայնեցման ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշը և օգտագործված գործվածքների գործարանային պիտակները, որտեղ նշված լինեն գործվածքների բաղադրությունը և խտությունը: Հանդերձանքի նմուշը համաձայնեցնելուց հետո Գնորդի</p>

		<p>կողմից Վաճառողին կտրամադրվեն հանդերձանքի չափսերը: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Հակերը պիտակավորված: Պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում արտոնագրված, հավաստագրված փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված եզրակացություն՝ Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի համապատասխանության վերաբերյալ:</p>
--	--	--

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ԲԿԾ-ԵԱՃԱՊՁԲ-24/9 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		